

Թիւ 26507  
Սեպտեմբեր 18, 1979

Հոգեշնորհ

Տ. Վազգէն օ. Արդ. Քէշիշեան  
Առաջնորդի Փոխանորդ Գանձայի  
Թորոնթօ.

Միրելի Հայր Վազգէն,

Գոհունակութեամբ ստացանք Օգոստոս 29-ը 1979 թուակիր մեր աեղեկա-  
տուութիւնը Օգոստոս 27ին գումարուած ժողովին մասին, ուր Թորոնթոյի  
մէջ պաշտօնապէս մեր հաստատած երկրորդ ծուխին համար նշանակուած ծխա-  
կան Խորհուրդի անդամները զաղանի քուէարկութեամբ ընտրած են Ս. Խաչ  
Հայց. Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի դիւանը, համաձայն Օգոստոս 14,  
1979 թուակիր մեր նամակի յանձնարարութեան:

Կը հաստատենք ստորեւ Ներկայացուած անունները իբրեւ անդամ Ս. Խաչ  
Հայց. Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի դիւանին եւ կը մաղթենք որ Տիրո՞  
օր հնութեամբ իրենց վասահուած պարտականութիւնները կատարեն արդիւնա-  
ւէտութեամբ՝ Աստուծոյ փառքին եւ մեր ժողովուրդի հոգեւոր կեանքի  
բարգաւաճումին համար:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տորթ. Վ. Այնանեան՝ Ատենապետ  
Արմէն Քիւրքնեան՝ Փոխ Ատենապետ  
Տորթ. Վահէ Սվամեան՝ Ատենադպիր  
Լեւոն Զէօմէլէքնեան՝ Փոխ Ատենադպիր  
Ղեւոնդ Շահմէլիքնեան՝ Գանձապահ  
Ժան Ֆէնէրնեան՝ Փոխ Գանձապահ